ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» Նոյեմբերի 2021թ. N ՄՈ 563-2021

ք. Արմավիր

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 8-րդ, 10-րդ, 21-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2021 թվականի նոյեմբերի 5-ի գրությունը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության վարչական համալիրում կայանալիք նիստին մասնակցելու նպատակով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին 2021 թվականի նոյեմբերի 19-ին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:
2. Հայաստանի Հանրապետության ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ (պետ՝ Վ. Մկրտչյան) իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետ՝ Ա. Համբարձումյան) ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 18.11.2021 12:02:50 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230